

Հարց - Երեք մարզերի կոնկրետ ո՞ր 12 համայնքներում է տեղադրվելու համակարգը (դրանից կախված են ծրագրի տեղադրման, տեղերում ուսուցանումների կազմակերպման և տեխնիկական /երաշխիքային սպասարկման հետ կապված ծախսերը)

Պատասխան- Լոռի և Վայոց Ձոր մարզերի 8 թիրախ կլաստերները հայտնի են և ներկայացված են ստորև: Սյունիքի մարզի համայնքները ներկայումս գտնվում են գնահատման փուլում և համայնքները պարզ կլինեն ավելի ուշ: Սյունիքի մարզի համայնքների աշխարհագրական տեղադիրքի մասին պատկերացում կազմելու համար կարող ենք ասել, որ ուսումնասիրությունը կատարվում է Կապանի և Մեղրիի տարածաշրջանում:

Լոռի- Դեբեդ, Ահնիձոր, Շնող և Մեծ Այրում

Վայոց Ձոր- Արփի, Արենի, Քարագլուխ, Գնդևագ

Հարց- Ի՞նչ կարգով են կատարվելու մնացած 43 համայնքների տեղեկատվության մուտքագրումը: Մուտքագրումը կատարվելու է 12 համայնքներում աշխատող օպերատորների կողմի՞ց, թե՞ այդ համայնքների ներկայացուցիչները պետք է այցելեն կլաստերներ մուտքագրման համար և փաստացի նույնպես վերապատրաստվեն:

Պատասխան- Ուսուցանումը և վերապատրաստումը պետք է կազմակերպվի 12 թիրախ համայնքների օպերատորների, ինչպես նաև պատվիրատուի ներկայացուցչի համար, որը հետագայում կհանդիսանա վերապատրաստող մյուս 43 համայնքների տվյալների մուտքագրման համար:

Հարց- Այս պահին ինչպիսի՞ համակարգչային հագեցվածություն ունեն 12 համայնքները

Պատասխան- ԱՐԴԻ ծրագիրը նախատեսում է 12 համայնքներին ապահովել նոր համակարգիչներով, որոնք կհամապատասխանեն SՀ-ի անխափան աշխատանքը ապահովելու պահանջներին:

Հարց- Հարկավո՞ր է արդյոք որպեսզի տեղերում ծրագիրը աշխատի ցանցային տարբերակով՝ հնարավորություն ընձեռելով աշխատել համակարգի հետ զուգահեռաբար մի քանի օպերատորների:

Պատասխան- Համակարգը պետք է աշխատի լոկալ և ավտոնոմ, սակայն կարող է նաև լրացուցիչ ունենալ ցանցային տարբերակով աշխատելու ֆունկցիոնալություն:

Հարց- Ի՞նչ ի նկատի ունեք տեխնիկական առաջադրանքում՝ ասելով "Համակարգում պետք է լինի ավտոմատ կերպով թեստավորման համակարգ:"

Պատասխան- Ելնելով համակարգի տվյալների պահպանման անվտանգության և արագագործության նկատառումներից՝

1. Համակարգը պետք է ունենա գործիք, որի միջոցով նախասահմանված պարբերականությամբ ստեղծվի և պահպանվի տվյալների բազան ամբողջովին: Արխիվները վերականգնելու գործիքը պետք է ևս ներառված լինի համակարգի հնարավորությունների մեջ:
2. Համակարգը պետք է ունենա Թեստավորման գործիք, որը հնարավորություն կընձեռնի տվյալների բազայի դիագնոստիկայի և հնարավոր սխալների հայտնաբերման և ուղղման համար:

Հարց- Ի՞նչ ֆորմատով է լինելու ներմուծվող կադաստրային քարտեզ(ներ)ի ֆայլը

Պատասխան-Քարտեզի ֆայլի ֆորմատը կախված է առաջարկվող SZ-ի տեխնիկական/ծրագրային առանձնահատկություններից: Պատվիրատուի տեսանկյունից կարևոր է SU-ում նշված ֆունկցիոնալության ապահովումը:

Հարց- Ինչպե՞ս է կատարվելու արդեն ներմուծված քարտեզների փոփոխությունը (հողատարածքների բաժանում, սահմանների փոփոխություններ և այլն)

Պատասխան- Համայնքները ինքնուրույն իրավունք չունեն փոփոխելու համայնքի քարտեզները, դա կատարվում է պետական լիազորված գերատեսչությունների կողմից: Այս տեսանկյունից համակարգը պետք է հնարավորություն ընձեռնի նոր, փոփոխված քարտեզների մուտքագրման համար: Համակարգը պետք է հնարավորություն ընձեռնի, որ նոր քարտեզների մուտքագրման ժամանակ օպերատորը ստիպված չլինի կրկնակի մուտքագել քարտեզի չփոփոխված հատվածների տվյալները: Քարտեզները պետք է տրամադրի իրականացնողը:

Հարց - Վերջնական ստացված ծրագրի անվանական իրավունքն ում է պատկանելու և արդյոք մեր կազմակերպությունը հետագայում կկարողանա օգտագործել ստացված ծրագիրը:

Պատասխան - Վերջնական ստացված ծրագրի անվանական իրավունքը պատկանելու է Պատվիրատուին, Իրականացնողը կկարողանա օգտագործել ստացված ծրագիրը միայն Պատվիրատուի համաձայնությամբ: